

**ԿԱՐՄԻ ՄԱՐԶԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ.
ԵՐԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՆԱԽԱԳԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Գևորգ Վարդանյան

Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելուց և Մուդրոսի զինադադարը (1918 թ. հոկտեմբերի 30) ստորագրելուց հետո Օսմանյան կայսրությունը հայտնվեց խիստ ծանր վիճակում: Զինադադարի պայմանների համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից՝ հասցնելով մինչև պատերազմը գոյություն ունեցող սահմանները: Իր հերթին կառավարող իթթիհադական վերնախավը փորձում էր պահպանել Բաթումի պայմանագրով (1918 թ. հունիսի 4) ձեռք բերած տարածքները, ուստի ձգձգում էր զորքերի դուրսբերումը: 1918 թ. նոյեմբերի 24-ին թուրքական սպայակոյտը տեղեկացվեց դաշնակիցների գերագույն ռազմական խորհրդի որոշման մասին, որի համաձայն՝ պահանջվում էր թուրքական զորքերի դուրսբերումը Կարսից, Արդահանից և Բաթումից¹:

Տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրադրությունը կառավարող վերնախավին ստիպեց որոշ փոփոխություններ մտցնել մտեցումների և կիրառվող միջոցների մեջ: Անդրկովկասին տիրանալու համար Թուրքիան առայժմ չէր կարող ռազմական բաց գործողություններ ծավալել: Աշխարհաքաղաքական հաջող իրադրությունը և դրան նախորդած երկարատև նախապատրաստություններն արդեն հանգեցրել էին նրան, որ Անդրկովկասում 1918 թ. կովկասյան թաթարները հայտարարեցին Ադրբեջան անվանումով պետության ստեղծման մասին²: Մյուս կողմից թուրքական իշխանությունները սկսեցին լուրջ միջոցառումներ ձեռնարկել նորաստեղծ անդրկովկասյան հանրապետություններում՝ Հայաստանում և Վրաստանում, աշխուժացնելու մուսուլման զանգվածների անջատողական ձգտումները, դրդելու նրանց ակտիվ գործողությունների, այնուհետև հանդես գալու որպես նրանց հովանավոր³:

¹ Հովհաննիսյան Ռ. Գ., *Հայաստանի Հանրապետություն*, հատար I. Առաջին տարին, 1918-1919 (ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., խմբ.՝ Ա. Խատատյան), Եր., «Տիգրան Մեծ», 2005, էջ 218:

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Демоян Г., Турция и Карабахский конфликт (в конце XX - начала XXI веков). Историко-сравнительный анализ, Ереван, 2006, стр. 47-48. Տե՛ս նաև հետևյալ աշխատությունը՝ Варданян Т., *Азербайджанцы: История одного незавершенного этнопроекта. Историко-этнологический очерк*, Москва: Русская панорама, 2012.

³ Այստեղ հարկ է նշել, որ Բաթումի մարզի մուսուլմաններին թուրքական իշխանություններն օգտագործել էին դեռևս 1918 թ. առնանս այստեղ կազմակերպված «ժանդարներ» ստիժով: «Հանրաքվեն» անցկացվում էր բոլոր հնարավոր անօրինական միջոցներով, երբ տեղական բնակչության զգալի մասը կոտորվել էր, իսկ ընտրություններին մասնակցում էին թուրքերի կողմից այստեղ բերված մարդիկ: Նման պայմաններում «ժանդարներ» չէր կարող զվերածվել «կառավարության», երբ իրենք՝ թուրքերն էին խախտում Բրեստի պայմանագրի չորրորդ հոդվածը: Տե՛ս Бадалян Х.А., *Турецко-германская экспансия в Закавказье 1914-1918 гг.*, Ереван, «Айастан», 1980, էջ 92: Նպատակը պարզ էր. իթթիհադականները փորձում էին օրինական տեսք տալ իրենց զավթողական քաղաքականությանը՝ կեղծ ընտրությունների միջոցով հասնելով «փնթորոշման», ապա նաև Թուրքիայի հետ միացման: Այնուամենայնիվ իրադարձությունների հետագա ընթացքը հնարավորություն չտվեց իրացնելու «ժանդարներ» արդյունքները:

Այս մոտեցումն ուներ մի շարք առավելություններ:

1. Անմիջական ռազմական գործողություններ չնդեղով անդրկովկասյան հանրապետությունների դեմ՝ կարելի էր տեղի մուսուլման տարրի ուժերով անջատել որոշ շրջաններ՝ այդ գործում օգտագործելով թուրքական բանակի հրահանգիչներին և սպաներին:

2. Առաջիկայում Փարիզում նախատեսվում էր գումարել խաղաղության վեհաժողով, որտեղ կարելի էր ներկայացնել մուսուլման տարրի «պահանջատիրությունը» և հնարավորության դեպքում որոշ առավելություններ ստանալ:

3. Ապստամբած մուսուլման տարրը կարող էր ապավինել նորաստեղծ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության օգնությանը:

Նշված խնդրի լուծման համար իթթիհադական վերնախավը փորձեց մի միջոց կիրառել, որը նոր էր թուրքական ծավալապաշտության մեջ: Խոսքը վերաբերում է «արիեստական պետություններ» կամ ավելի ճիշտ կլինի ասել «արիեստական պետական կազմավորումներ» ստեղծելուն: Նշված եղանակն առաջին անգամ կիրառվել էր Բալկանյան պատերազմների ժամանակ, երբ Արևմտյան Թրակիայում հռչակվել էր «թուրքական հանրապետությունը»: Այն ժամանակ ևս ակտիվացնելով տեղի փոքրամասնություն կազմող մուսուլմաններին՝ 1913 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմավորեց «Արևմտյան Թրակիայի ժամանակավոր կառավարությունը»: Իրականում, սակայն, ողջ իշխանությունը կենտրոնացված էր «Հատուկ կազմակերպության»⁴ և դրա ղեկավարներից Սուլեյման Ասկերիի ձեռքում⁵: Այդ ամենի գլխավոր նպատակն Ադրիանապոլսի հարցում զիջումներ ստանալն էր⁶:

⁴ «Հատուկ կազմակերպությունը» («Teşkilat-ı Mahsusa») - Ռազմական նախարարության հատուկ զինված կազմակերպություն՝ ստեղծված Էսվեր փաշայի կողմից, որն ունի բացառիկ դեր Հայոց ցեղասպանության իրականացման գործում: Չնայած տարածված տեսակետներից մեկի համաձայն՝ կազմակերպության պաշտոնական հիմնադրումը թվագրվում է 1914 թ. օգոստոսով, ըստ երևույթին, Հատուկ կազմակերպության պաշտոնական հիմնադրումը միայն գոյություն ունեցող իրավիճակի վավերացումն էր: Հստակ է, որ դրա անդամները որպես առանձին ջոկատ գործել են դեռևս 1912-1913 թթ. ընթացքում: Դրա օգտին է նաև այն, որ ըստ կազմակերպության ակտիվ անդամ Էշրեֆ Քուշուբաշլիի՝ այն ստեղծվել է 1911-1913 թթ. (տե՛ս Stoddard Philip, *Teşkilatı Mahsusa: Osmanlı Hükümeti ve Araplar 1911-1918: Teşkilatı Mahsusa Üzerine Bir On Çalışma*, İstanbul, Arma Yayınları, 2003, էջ. 54): Թուրքական որոշ աղբյուրներում «Teşkilat-ı Mahsusa» անվանումը տարածվում է մինչև 1914 թ. գործող այդ խմբի վրա: Տե՛ս Zürcher E. J., *The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905–1926*, Leiden, E. J. Brill, 1984, էջ 59:

⁵ Авакян А., *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX - первая четверть XX вв.)*, Ереван, изд. «Гитутюн», 2001, стр. 227-228.

⁶ Բալկանյան երկրորդ պատերազմը (1913 թ. հունիսի 29 - օգոստոսի 10) ընթանում էր Բուլղարիայի և Բալկանյան առաջին պատերազմում (1912 թ. հոկտեմբերի 8- 1913 թ. մայիսի 30) նրա դաշնակից Սերբիայի, Հունաստանի, Չեռնոգորիայի, Ռումինիայի և հակառակորդ Օսմանյան կայսրության միջև: Առաջին պատերազմում Օսմանյան կայսրությունը, ի թիվս այլ եվրոպական տարածքների, կորցրեց նաև Ադրիանապոլիսը: Երկրորդ պատերազմում արդեն Բուլղարիան չկարողացավ դիմադրել իր նախկին դաշնակիցներին և նրանց միացած Օսմանյան կայսրությանը: 1913 թ. օգոստոսի 10-ի Բուխարեստի պայմանագրի ստորագրումից որոշ ժամանակ անց (Բուլղարիայի և վերոնշյալ Բալկանյան պետությունների միջև) Բուլղարիան 1913 թ. սեպտեմբերի 29(30)-ին

Թուրքերը հասան իրենց նպատակին, քանի որ Բալկանյան երկրորդ պատերազմից հետո Ադրիանապոլիսը մնաց Թուրքիային:

Անդրկովկասում, անշուշտ, քաղաքական իրադրությունը և ուժերի հարաբերակցությունն այլ էր: Այստեղ անհրաժեշտ էր համախմբել մուսուլմաններին, որը պահանջում էր կազմակերպչական մեծ աշխատանք: Առաջին քայլը եղավ 1918 թ. նոյեմբերի 5-ին Կարսի մահմեդական խորհրդի ստեղծումը Հիլմի (Ուրան) բեյի և Ֆահրեդդին (Էրդողան) բեյի գլխավորությամբ: Կազմակերպչական առումով կարևոր էին նաև 1918 թ. նոյեմբերի 14-15-ին և հատկապես 1918 թ. նոյեմբերի 30-դեկտեմբերի 2-ը Կարսում գումարված կոնգրեսները: Ստեղծվեց Կարսի Իսլամական ազգային խորհուրդը՝ բաղկացած 12 հոգուց: Այն ղեկավարվում էր Ֆահրեդդին բեյի և Ջհանգիրօղլու Իբրահիմի կողմից⁷: Այս ամենը կատարվում էր անմիջականորեն թուրքական 9-րդ բանակի հրամանատար գեներալ Յակուբ Շևքի⁸ փաշայի հրահանգներով և ցուցումներով: Մահմեդական խորհուրդը կարողացավ ուռքի հանել մոտ 8.000 մարդ⁹: Այժմ արդեն թուրքական ուժերի հեռանալուց հետո նշված շրջաններում կազմավորված խորհուրդը և նրա ենթակայության տակ եղած ուժերը կարող էին լուրջ գործոն դառնալ:

1919 թ. հունվարի 17-18-ին շուրջ հարյուր պատվիրակներ հավաքվեցին Կարսում՝ խորհրդաժողովի: Այն նախագահում էր Չըլդըրից Էսադ Օքթայը¹⁰: Խորհրդաժողովը որոշեց, միավորելով Կարսի, ինչպես նաև մյուս շրջանների շուրաները, հռչակել Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր ազգային կառավարություն¹¹: Ընդունված սահմանադրության համաձայն, որը բաղկացած էր 18 հոդվածից, Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր ազգային կառավարության իշխանությունը տարածվում էր Աջարիայից՝ Սև ծովից մինչև Նախիջևան՝ պարսկական սահմանի մոտ¹²: Նորաստեղծ կառավարությունն օգտագործելու էր թուրքերենը՝ որպես պաշտոնական լեզու, ունենալու էր օրենսդիր մարմին (մեջլիս՝ կազմված 64

Օսմանյան կայսրության հետ ստորագրեց Կոստանդնուպոլսի պայմանագիրը, որով էլ, ի թիվս շրջակա այլ տարածքների, վերջինիս զիջեց Ադրիանապոլիսը: Այս իրադարձությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Richard C. Hall, *The Balkan Wars, 1912-1913: Prelude to the First World War*, London, Routledge, 2000; Edward Erickson, *Defeat in Detail: The Ottoman Army in the Balkans, 1912-1913*, Westport, Ct: Praeger, 2003): Ահա մինչ այս պայմանագրի ստորագրումը Բուդղարիայի վրա ճշում գործադրելու համար էր, որ երիտթուրքերն այստեղ կիրառեցին արհեստական պետական կազմավորում ստեղծելու մեթոդը: Տե՛ս Авакян А., *Черкесский фактор в Османской империи и Турции...*, стр. 227-228:

⁷ Հովհաննիսյան Ռ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 219:

⁸ Յակուբ Շևքի (Սուրաշը) փաշան (1876-1939 թթ.) թուրք ոսպնական գործիչ է: Մասնակցել է Բալկանյան պատերազմներին, եղել Առաջին աշխարհամարտի մի շարք կարևոր թատերաբեմերում, 1918-1919 թ.թ. եղել է Օսմանյան 9-րդ բանակի հրամանատար: Նա եղել է Մալթա աքտրված երիտթուրք գործիչների շարքում, ապա վերադարձել և ակտիվորեն մասնակցել է Ազգայնական շարժմանը:

⁹ Նույն տեղում, էջ 220:

¹⁰ Էսադ Օքթայը (1887-1972 թ.թ.) մասնագիտությամբ բժիշկ է եղել:

¹¹ Նույն տեղում, էջ 223:

¹² Նույն տեղում, էջ 224:

պատգամավորից՝ 60 մուսուլման, 3 հույն և մեկ մոլդկան ռուս), որն ընտրվելու էր ժողովրդավարական ընթացակարգով՝ լիազորություն ունենալով նշանակել մշտական կառավարություն:

Հարավարևմտյան կովկասյան կառավարությունն իր առջև խնդիր էր դրել միավորել Կարսի, Բաթումի, Արդահանի, Ախալցխայի, Ախալքալաքի, Շարուրի, Նախիջևանի, Սուրմալուի և Երևանի (մի մասի) գավառները և հասնել այդ շրջանների ընդգրկմանը «հանրապետության» կազմի մեջ¹³: Այդ տարածքները «մասն էին կազմում» ևս երկու արհեստական պետական կազմավորումների՝ «Արաքսյան թուրքական հանրապետության» և «Ախալցխայի ժամանակավոր կառավարության»¹⁴: Դրանք պետք է դառնային տեղական կառավարություններ, որոնք հնարավորություն կտային երիտթուրքերին գործերը դուրս բերելուց հետո պահպանելու ազդեցությունը տարածաշրջանում և հող նախապատրաստելին հետագայում թուրքերի վերադարձի համար: Սակայն ինչպես Ախալցխայի, այնպես էլ «Արաքսյան հանրապետությունը», նման լինելով իրենց առաջ դրած խնդիրներով և նպատակներով, այնուամենայնիվ, այնքան ուժեղ և կազմակերպված չէին, որքան Կարսի կառավարությունը:

Կարսում փաստացի իշխանությունը հայտնվեց մուսուլմանական շուրայի (խորհուրդ) և նրա ստեղծած մարմինների ձեռքում: Միայն դրանից հետո գեներալ Յակոբ Շևքի փաշան սկսեց օսմանյան 9-րդ բանակի դուրսբերումը Կարսից՝ միաժամանակ գեներալ ու զինամթերքն ամբողջ Կարսի մարզով մեկ թաքցնելով և թողնելով առանձին սպաների՝ տեղի մուսուլմաններին օգնելու և նրանց ուղղություն ցույց տալու համար¹⁵: Կարսի մուսուլմանները լավ զինվել էին և նույնիսկ ունեին գնդացրային վաշտեր¹⁶:

Թուրքական ծավալապաշտությունը փորձում էր ամեն կերպ օգտագործել մուսուլման բնակչությանը՝ արհամարհելով անգամ այն փաստը, որ ազգային խմբերից Կարսի մարզում մեծամասնություն էին կազմում հայերը և ոչ թե թուրքերը: Կարսի մարզը Ռուսական կայսրությանն էր միավորվել 1877-1878 թ.թ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո: 20-րդ դարի սկզբին մարզը վարչականորեն բաժանված էր չորս օկրուգի՝ Կարսի, Կաղզվանի, Արդահանի և Օլթիի: 1916 թ. տվյալներով մարզի բնակչության թիվը կազմում էր 404 305 մարդ: Առաջին երկու օկրուգներում հայերը կազմում էին մեծամասնություն (Կարսում 191.970 բնակչությունից հայեր էին 80 752-ը, թուրք-թաթարներ՝ 50 790, մնացածը՝ հույներ, ռուսներ, քրդեր և այլն, իսկ Կաղզվանի օկրուգում 83.208 բնակչությունից հայեր էին 34 721-ը, թուրք-թաթարներ՝

¹³ Кадмишев А. Б., *Интервенция и гражданская война в Закавказье*, Москва, Воениздат, 1960, стр. 170.

¹⁴ Արհեստական պետական կազմավորումներ ստեղծելու թուրքական երկու նախագծեր: Այսպես կոչված «Արաքսյան թուրքական հանրապետությունը» կազմավորվեց 1918 թ. վերջին Ջաֆարդուլի խան Նախիջևանսկու գլխավորությամբ և անկում ապրեց 1919 թ. հունիսին հայկական ուժերի կողմից Նախիջևանի առժամանակյա ազատագրմամբ:

¹⁵ Հովհաննիսյան Ռ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 226:

¹⁶ «Յառուջ», 1919 հունվարի 29:

5717-ը, մնացածը՝ քրդեր, հույներ և այլն)¹⁷:

Հաշվի չառնելով այս կարևոր հանգամանքը՝ ինքնահոշակ կառավարությունը պահանջում էր ճանաչել իր իրավունքները Կարսի, Բաթումի, Ախալցխայի, Ախալքալաքի, Շարուրի և Նախիջևանի նկատմամբ¹⁸: Նոր հանրապետությունը երաշխավորում էր իր բոլոր քաղաքացիների հավասարությունը՝ անկախ ազգային, կրոնական կամ սոցիալական պատկանելությունից¹⁹, սակայն ինչպես ցույց է տալիս իրադարձությունների ընթացքը, դա չէր վերաբերում հայերին:

Այս հանգամանքը չափազանց կարևոր նշանակություն ունի այն առումով, որ լրացուցիչ ապացույց է Կարսի շուրայի՝ որպես պետական կազմավորման, շինծու և արհեստական լինելը: Իրեն կառավարություն համարող մարմինը հավակնում էր կառավարել մի շրջան, որտեղ հաշվի չէին առնվում հիմնական բնակչության շահերը: Դրան գումարվում է նաև Կարս քաղաքը որպես կենտրոն ընտրելը, որը մարզի ամենահայաշատ վայրերից էր: Ինչպես նշում է պատմաբան Է. Ջոհրաբյանը. «Նպատակը պարզ էր, ինքնորոշման շղարշ տալով այս կազմավորմանը՝ խոչընդոտել պանթուրքիզմի պլանների տեսակետից խիստ կարևոր նշանակություն ունեցող այս տարածքների միացումը Հայաստանի Հանրապետությանը և պահպանել հնարավորություն՝ ապագայում կրկին դրանց տիրանալու, կամ հակառակ դեպքում Ադրբեյջանին միացնելու համար»²⁰:

Դաշնակցական գործիչ Ռուբենը նշում է, որ անգլիացիների կողմից շուրայի անդամների ձերբակալումից հետո կազմվել է նոր խորհուրդ: Այս նոր շուրան էր, որ ղեկավարում էր Կարսի մուսուլմաններին: Անգամ հայտնի չեն եղել նրա անդամների անունները, քանի որ, ըստ Ռուբենի, այս նոր շուրան գործում էր շատ զգույշ և կազմակերպված²¹: Ռուբենը նշում է նաև, որ որոշ տարբերություն կար Նախիջևանի և Կարսի մուսուլմանների գործողությունների մարտավարության մեջ: Այստեղ՝ Կարսում, նրանք կարծես նպատակ էին դրել պահպանելու մուսուլմաններին, նրանցից կազմակերպված ուժ ստեղծելու, դրսևորելու համբերատարություն՝ սպասելով Թուրքիայում դեպքերի զարգացմանը: Այդ գործելակերպի առավելությունն այն էր, որ երբ Թուրքիան հարմար առիթ ունենար վերադառնալու Կարս, իրենք կնստնեին թուրքական տիրապետության մեջ²²:

Կարսի մարզի տարածքում հոշակված Հարավարևմտյան կովկասյան կառավարության նպատակների մեջ էր մտնում Հայաստանի թուլացումը հայկական

¹⁷ Шахатунян, А., *Административный передел Закавказского края*, Тифлис, Тип. Ашхатавор, 1918, стр. 72-74.

¹⁸ Kazemzadeh Firuz, *The struggle for Transcaucasia (1917-1920)*, with an introduction by Micheal Karpovich, New York: Philosophical Library, 1951, p. 199.

¹⁹ Նույն տեղում, էջ 199:

²⁰ Ջոհրաբյան Է. Ա., *Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ. - 1920 թ. ապրիլ)*, Եր., 2002 թ., էջ 37:

²¹ Ռուբեն, *Հայ Յեղափոխականի մը յիշարակները*, Է հատոր, Երևան, «Ադանա», 1990, էջ 210:

²² Նույն տեղում, էջ 211:

ուժերի վրա ավագակային միավորների ուժերի հարձակումների միջոցով²³: Այս առումով ուշագրավ են պատմաբան Հայկ Դեմոյանի եզրահանգումները, որոնց համաձայն՝ կազմավորելով այդպիսի խամաճիկային պետական միավորներ, թուրքական կողմի հետապնդած ռազմավարական նպատակը կապի ստեղծումն էր Ադրբեջանի և Նախիջևանի ու Սևծովյան ափի միջև: Միաժամանակ նպատակ էր դրված ստեղծելու բուֆերային գոտի թուրքական ուժերի և կովկասյան հանրապետությունների միջև²⁴:

Մուսուլմանական խորհուրդը գոյություն ունեցավ Կարսում անգլիական գնենրալ-նահանգապետության հետ զուգահեռ: Անգլիացիներն էլ իրենց հերթին էին փորձում օգտագործել այդ կառավարությունն իրենց շահերի համար: Պատահական չէ, որ 1919 թ. փետրվարի 15-ին Ն. Ժորդանիան Անգլիայի ներկայացուցիչ Ֆորսթեր Ուոկերի հետ զրույցի ժամանակ նշել է, որ այդ նոր կառավարությունը բացահայտ հայտարարում է, որ գտնվում է Անգլիայի հովանավորության տակ²⁵:

Կարսի մարզի թաթար բնակչությունն ընդգրկվում էր մեծ կամ փոքր զորաջոկատների մեջ, դրանց աջակցում և զինում էին թուրքերը, ովքեր պետք է նահանջեին նախապատերազմյան իրենց սահմանը²⁶: Այդ ամենը կատարվում էր Կարսի մարզի գրեթե բոլոր թաթարաբնակ գյուղերում թուրքական և գերմանական սպաների ղեկավարությամբ, և դա այն պայմաններում, երբ հայ բնակչությունն ապահովության ոչ մի երաշխիք չուներ:

Կարսի շուրան իր գոյության կարճ ժամանակահատվածում եղել է թուրքական ավիանների աջակցությամբ ոտքի կանգնած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ուշադրության կենտրոնում: Ադրբեջանական իշխանությունները, անմիջական կապ չունենալով արհեստական այդ միավորման ստեղծման հետ, այնուամենայնիվ փորձել են օգտագործել և աջակցել դրա գոյությանը: Ադրբեջանական իշխանությունները չէին կարող անուշադրության մատնել Կարսը Հայաս-

²³ Демоян Г., *Турция и Карабахский конфликт...*, стр. 49.

²⁴ Демоян Г., *Внешняя политика Турции и Карабахский Конфликт*, с. 77-79.

Ընդհանուր առմամբ թուրքական ծավալապաշտության մեջ կիրառվող այս մոտեցմանը հայ պատմագրության մեջ համեմատաբար քիչ է անդրադարձ կատարվել: Չնայած Կարսի մարզում ծավալված իրադարձությունների մասին համառոտ կամ ընդարձակ անդրադարձներ կան մի շարք պատմաբանների գործերում, այնուամենայնիվ, դրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության ծիրում դիտարկելու և տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների տեսանկյունից մեկնաբանելու առումով պետք է առանձնացնել Հայկ Դեմոյանի դիտարկումները:

²⁵ Մեծ Բրիտանիայի դիրքորոշումն այս հարցում միանշանակ դժվար է գնահատել: Սկզբնական շրջանում բրիտանացիները նախընտրում էին զվտահեղ հայերին՝ երկյոտելով, ըստ իրենց, նրանց ռուսասիրությունից, որը կարող էր մեծացնել Ռուսաստանի ազդեցությունը, ուստի հրաժարվում էին Հարավարևմտյան Կովկասյան կառավարության դեմ կտրուկ գործողություններից: Սակայն ժամանակի ընթացքում տեսնելով Կարսի շուրայի խռովարար գործողության սաստկացումը և ազդեցության գոտու մեծացումը՝ ի վերջո հանգեց մուսուլմանական խորհուրդը տասպալելու մտքին: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 227-234: Кадмишев А.Б., *указ. соч.*, стр. 171.

²⁶ Rawlinson A., *Adventures in the Near East 1918 – 1922*, New York, Dodd, Mead and Company, 1924, p. 151.

տանի Հանրապետության տարածքում իրենց ծավալած քայքայիչ գործունեության ժամանակ: Երբ 1919 թ. Կարսը միավորվեց Հայաստանի Հանրապետությանը, Ադրբեջանը հրաժարվեց ճանաչել դա, ավելին՝ իր դիվանագիտական ներկայացուցչին՝ Մ. Խան-Թեքինսկուն հրահանգեց հետևյալը. «Անհապաղ կա՛յ հաստատեցեք Ղարսի կառավարության հետ: Տու՛յց տվեք նրան ամեն տեսակ աջակցություն, իմացե՛ք, թե ինչ կարիքներ ունի, հեռագրեցեք մեզ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար...»²⁷: Այս հաղորդագրությունն ինքնին ներկայացնում է այս հարցում Ադրբեջանի քաղաքականության էությունը:

1919 թ. ապրիլին, կապված անգլիացիների որոշման հետ, Խան-Թեքինսկին հեռագրում է Ադրբեջանի արտգործնախարարություն՝ առաջարկելով. «Անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականների, ինչպես նաև Հաշտության վեհաժողովի առաջ անգլիացիների այն ցանկության դեմ, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թվով կես միլիոն հայերին»²⁸:

Կարսի մարզում ինքնահռչակ կառավարության ստեղծումը, լինելով թուրքական կողմի գործունեության անմիջական արդյունք, այնուամենայնիվ, ներկայացվում է որպես ադրբեջանական: Ինչպես Նախիջևանի շրջանում հռչակված «Արաքսյան հանրապետությունը», այնպես էլ Կարսի Հարավարևմտյան Կովկասյան կառավարության ստեղծումը պայմանավորվում են «այն ծայրահեղ անհրաժեշտությամբ, որ ստեղծվել էր շրջանի և նրա բնակչության համար թուրքական գործերի հեռանալուց հետո»²⁹: Այդ տեսակետը հատկապես ակտիվ պաշտպանվում է ադրբեջանցի պատմաբան Ա. Հաջինի կողմից, ով ևս ընդգծում է, որ իբր Կարսի և Բաթումի մարզերի տարածքում ձևավորվում էր անկախ պետականություն, որն ավելի շատ հակվում էր դեպի ԱԴՀ, քան Թուրքիա³⁰: Ադրբեջանական պատմագրության մեջ տարածված այս տեսակետը չի համապատասխանում իրականությանը: Այդ ինքնահռչակ պետական կազմավորումների ստեղծման գլխավոր նպատակը Թուրքիայի կողմից Նախիջևանի, Շարուրի, ինչպես նաև Կարսի մարզի տարածքի զավթումն էր՝ այդ նպատակի համար օգտագործելով մուսուլման բնակչությանը:

1919 թ. ապրիլի 10-ին գեներալ Թոմսոնը հրապարակեց հայտարարություն «Հարավարևմտյան Կովկասյան կառավարության» լուծարման մասին՝ նշելով, որ Հաշտության վեհաժողովը պետք է որոշի Կարսի և մյուս վիճելի տարածքների վերջնական կարգավիճակը³¹: 1919 թ. ապրիլի 12-ին գինաթափ անելով շենքը հսկող պահակներին՝ ձերբակալեցին պառլամենտի և կառավարության անդամներին:

²⁷ *Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դաադրական գործունեությունից մի էջ*, Երևան, Գլխաար Շտաբի տպ., 1920, էջ 23:

²⁸ Նույն տեղում, էջ 19:

²⁹ *Азербайджанская Демократическая Республика*, Баку, «Елм», 1998, стр. 77.

³⁰ Гаджиев Айдын, *Демократические республики юго-западного Кавказа*, Баку, «Нурлан», 2004, стр. 50-51. Հաջինի առաջ քաշած տեսակետների քննադատությունը տե՛ս Կոնյալյան Դ., էջ 65-66:

³¹ Kazemzadeh F., *նշվ. աշխ.*, էջ 200:

Նրանք արտրվեցին նախ՝ Բաթում, ապա՝ Կ. Պոլիս, այնուհետև՝ Մալթա³²: Ապրիլի 19-ին իշխանությունը փոխանցվեց Կարսի նահանգապետ նշանակված Ստեփան Դոորդանյանին, իսկ ապրիլի 28-ին հայկական 2-րդ հետևակային գունդը փոխարինեց քաղաքն ու ամրությունները հսկող թրիտանացիներին: Կարսը առժամանակ միավորվեց Հայաստանի Հանրապետությանը:

Այսպիսով, պայմանավորված Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում ստեղծված իրավիճակով, թուրքական իշխանությունները, նպատակ ունենալով թույլ չտալ Կարսի մարզի անցումը Հայաստանի Հանրապետությանը, փորձեր արեցին ակտիվացնելու տեղի մուսուլման բնակչությանը և, օգտագործելով նրանց ներուժը, հասնելու այդ շրջանի տրոհմանը և հետագայում թուրքական պետությանը միավորմանը: Այդ նպատակի համար նրանք օգտագործեցին արհեստական պետություն ստեղծելու, նրան կեղծ ժողովրդավարական կերպարանք հաղորդելու միջոցը: Նման մոտեցումը նոր-նոր էր ձևավորվում թուրքական ծավալապաշտության մեջ, որը հետագայում՝ 20-րդ դարի հետագա տասնամյակներին, կիրառվեց հանրապետական Թուրքիայի կողմից՝ այլ տարածքներ զավթելու համար (օր.՝ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության ստեղծումը»):

Կարսի մարզը Առաջին աշխարհամարտից հետո. երիտթուրքական մի նախագծի պատմություն

Գևորգ Վարդանյան

Ամփոփում

Մուդրոսի զինադադարից ստորագրումից հետո պատերազմում պարտություն կրած Օսմանյան կայսրությունը պարտավորվեց Անդրկովկասից դուրս բերել իր զորքերը մինչև Առաջին աշխարհամարտը գոյություն ունեցող սահմանները: Սակայն թուրքական իշխանությունները ձգձգում էին զորքերի դուրսբերումը: Ավելին, նրանք ստեղծում են Կարսի մահմեդական խորհուրդը, ապա հռչակում «Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր կառավարությունը»: Այդ քաղաքականության հիմնական նպատակը նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը նշված տարածքների անցումը կանխելն էր: Արհեստական պետական կազմավորումներ ստեղծելու ռազմավարությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ լայնորեն օգտագործվեց 20-րդ դարի ընթացքում:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր կառավարություն, Կարս, շուրա, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն:

³² Մալթա արտրվածների մասին ավելի մանրամասն տե՛ս Vartkes Yeghiayan, *British Foreign Office Dossiers on Turkish Was Criminals* (Pasadena, CA: AAIC, 1991).

Kars Province after World War I: History of a Young Turk Project

Gevorg Vardanyan

Summary

After the Mudros armistice Ottoman Empire had to withdraw its troops from Transcaucasia to the pre-World War I boundaries. However, the Turkish authorities delayed the removal of the soldiers. They established the Muslim Council of Kars and declared so-called South-Western Caucasian Provisional Government. The main goal of this policy was “to preserve” those areas and prevent their transition to the newly established Republic of Armenia. The attempts to create artificial state formations were largely used in the Turkish foreign policy throughout the 20th century.

Keywords: Ottoman Empire, South - Western Caucasian Provisional Government, Kars, Shura, Republic of Armenia, Republic of Azerbaijan.

Карсская область после Первой Мировой войны: к истории одного младотурецкого проекта

Геворг Варданян

Резюме

После Мудросского перемирия Турция должна была вывести свои войска из Закавказья к границам, существующим до Первой мировой войны, однако турецкие власти задержали эвакуацию войск. Создав мусульманский совет Карса, они провозгласили так называемое «Юго-Западное кавказское временное правительство». Основной целью данной политики было недопущение перехода этих районов к новосозданной Республике Армения. Стратегия создания искусственных государственных образований широко использовалась в турецкой внешней политике на протяжении XX века.

Ключевые слова: Османская Империя, Юго-Западное кавказское временное правительство, Карс, Шура, Республика Армения, Азербайджанская Республика.